

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԾՈՎԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

2017-2021թթ.

Կազմել է Ծովագյուղ համայնքի ղեկավար Վահրամ Գևորգյանը

Հաստատվել է Ծովագյուղ համայնքի ավագանու՝ 11.01.2017թ. թիվ 9 -Ն որոշմամբ

2017

Բովանդակություն

1. **Համայնքի ղեկավարի ողջունի խոսք**3-4

2. **Համայնքի իրավիճակի նկարագրություն** 5-25

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն5-6

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը7-14

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը14-16

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 17-23

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ23-24

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈՒԹՀՄ/ վերլուծություն25

3. **Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում**26-29

3.1 Համայնքի զարգացման տեսլական26-27

4. **ՀՀԶԾ մոնիտորինգ** 27-29

5. **Եզրափակում**.....49- 50

Հավելվածներ

- ✓ Ծրագրերի անձնագրեր
- ✓ ՀՀԶԾ-ի ֆինանսավորման ամփոփաթերթ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքի 5-ամյա զարգացման ծրագրի առանցքում համայնքային ռազմավարական ուղղությունների ուրվագծումն է, որոնց շնորհիվ որդեգրվելու է զարգացման մի նոր փուլ:

ՀՀԶԾ կազմելիս առաջնորդվել ենք ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից մշակված մեթոդաբանությամբ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

Ծովագյուղ համայնքն իր աշխարհագրական դիրքով, մարդկային և բնական ռեսուրսներով, իրականացրած ծրագրերով, ստեղծած ավանդույթներով նախանշել է ապագայի իր տեսլականը: Շատ կարևոր է, թե ինչպիսի համայնք ենք ուզում ունենալ 5 տարի անց և ցանկալի արդյունքի հասնելու համար առաջիկա տարիների ընթացքում հիմնական ինչ ուղղություններ ենք որդեգրելու այդ արդյունքին հասնելու համար:

ՀՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ուղորտներում), ՀՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ծովագյուղ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների

մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված են Ծովագյուղ համայնքի համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ:

ՀԶՀԾ-ն ներառում է նաև Ծովագյուղ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Ծովագյուղ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Ծովագյուղի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀԶՀԾ-ի փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Համայնքում առկա հիմնախնդիրների մեծ մասը տասնամյակների վաղեմություն ունի. բնակարանային ֆոնդի, ներհամայնքային ճանապարհների և փողոցների, կրթամշակութային օջախների շենքային պայմանների արդի վիճակն ուղղակիորեն խոչընդոտում է մի շարք ծրագրերի իրականացմանը:

Բոլորիս ցանկությունն ու նպատակը մեկն է՝ ապրել լավ ու բարեկեցիկ պայմաններում, զարգացած ու ներկայանալի համայնքում, իսկ տեղական իշխանության համար այդ ցանկությունն իրագործելն ամենօրյա աշխատանք է, ու ՀՀԶԾ-ն էլ փաստաթղթային այն մեկնարկն է, որ դառնալու է պետություն-համայնք-բնակիչ-մասնավոր սեկտոր համագործակցության երաշխիքն ու շարժիչ ուժը:

ԾՈՎԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՀՐԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2. Ծովագյուղ համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքը հիմնադրվել է 1830թ. –ին: Բնակչությունը գաղթել է Արևմտյան Հայաստանի Արծափ գյուղից: Նախկին անունները՝ Ճիպոտիկ, Չիբուխլու:

Ծովագյուղ գյուղը գտնում է ծովի մակերևույթից 2050մ բարձրության վրա:

Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ Ծովագյուղը դարձավ ինքնուրույն համայնք:

Ծովագյուղ համայնքը զբաղեցնում է 7314.92 հա հողատարածք:

2013թ-ին հաստատվել է համայնքի /բնակավայրի/ լրամշակված գլխավոր հատակագիծը, որը լուրջ նախադրյալներ է ստեղծում համայնքի զարգացման, առկա ռեսուրսների նպատակային օգտագործման, ներդրումների առումով:

Իր աշխարհագրական դիրքով Ծովագյուղը Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է. գտնվում է Արեգունի, Փամփակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում:

Համայնքն իր ափամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է: Այն առանձնանում է ջրային ռեսուրսներով, բնապահպանական և մշակութային հուշարձաններով:

Ներկայումս սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններից է փոքր և միջին բիզնեսի, զբոսաշրջության զարգացումը:

Համայնքում զարգացած է ծառայությունների մատուցման ոլորտը, գործում են կրթական, առողջապահական, մշակութային հաստատություններ, սպասարկող կազմակերպություններ և ընկերություններ:

Համայնքի բնակարանային տնտեսության մեջ ընդգրկվում է 3 բազմաբնակարան շենք: Համայնքն ամբողջությամբ գազաֆիկացված է: Համայնքն ունի երկու ջրամբարտակ, յուրաքանչյուրը 400 մ³ տարողությամբ, որն ապահովում է համայնքի բնակչության խմելու ջրի մոտ 90%-ը: Համայնքում կա երկաթուղային 1 կայարան: Համայնքով անցնող երկաթգծի երկարությունը կազմում է 18 կմ:

Կա անտոմոբիլային 3 և երկաթուղային 2 կամուրջ:

Համայնքի տարածքով է անցնում Ձկնգետը:

Համայնքով անցնում է բարձր ճնշման գազատարի 2 խողովակաշար՝ 750 մ ընդհանուր երկարությամբ, միջին ճնշման գազատար՝ 2800 մ երկարությամբ, և ցածր ճնշման 2 գազատար՝ 11500 մ երկարությամբ:

Բարձր լարման էլեկտրագծերի երկարությունը կազմում է 17000 մ: Ցածր լարման էլեկտրագծերի երկարությունը կազմում է 19000 մ:

Կա էլեկտրական 7 ենթակայան:

Համայնքի բնորոշ վտանգավոր երևույթներն են երաշտը, ուժեղ քամիները, կարկուտը, գարնանային և աշնանային ցրտահարությունները:

Աղյուսակում ներկայացված է Ծովագյուղ համայնքի բնակչության սեռատարիքային կազմը՝ համաձայն 2016թ. հունվարի 1-ի տվյալների:

Բնակչության սեռատարիքային կազմ	Ընդհանուր	իգական	արական
Բնակչության թվաքանակը	4412	2127	2285
Առկա	4082	1992	2090
0-4 տարեկան	281	133	148
5 տարեկան	60	30	30
6 տարեկան	67	32	35
7 տարեկան	65	31	34
8-14 տարեկան	349	165	184
15 տարեկան	58	28	30
0-15 տարեկան	880	419	461
16-62տարեկան տղամարդիկ			1399
63 և բարձր տարիքի տղամարդիկ			230
16-60 տարեկան կանայք		1343	
61-ից բարձր տարիքի կանայք		1639	

2. 2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ծովագյուղ համայնքի ընդհանուր բյուջեն 2016-2017թթ.

Հ/Հ	2016թ.	2017թ.	Աճ կամ նվազում 2016թ. համեմատ /տոկոս/
1. Համայնքի ընդհանուր բյուջեն ա/թ	116392.7	110704.8	95.1
-վարչական բյուջե	103042.0	109353.3	106.1
- ֆոնդային բյուջե	133507	1351.5	10.1
2. Սեփական եկամուտներ	23997.8	23000.1	95.8
3. Սեփական եկամուտներ տեսակարար կշիռը վարչական բյուջեի մեջ	23.3	21.0	90.1

Ջրուսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հուշարձաններ

Ծովագյուղ համայնքից ընդամենը 1.5 կմ հեռավորության վրա՝ Երևան-Թբիլիսի մայրուղուն հարող ճանապարհի աջ եզրին բարձրացող բլրի վրա է գտնվում Ծովագյուղի ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ եկեղեցին /15-17 դդ./: Այն նոր ժամանակներում վերակառուցված ուղղանկյուն հատակագծով և խորանով կառույց է: Շուրջը տարածվող գերեզմանոցի խաչքարերը կերտված են տեղական բազալտից, ունեն խոր քանդակներ, կան նաև պարզ հորինվածքով խաչքարեր: Մի քանի տապանաքարեր և խաչքարեր օգտագործվել են եկեղեցու պատերի մեջ:

ԱՍՏՈՒՌ 18-րդ դար: Գտնվում է գյուղից 1 կմ հարավ- արևելք <<Ավզով աղբյուրի>>-ի մոտ: Մատուռը ուղղանկյուն հատակագծով շինություն է սրբացված տապանաքարի և խաչքարի վրա: Մատուռի մեջ եղած բազալտե խաչքարը թվագրվում է 13-րդ դ. , իսկ <<Ավզով աղբյուրի>>-ի բետոնե պատի մեջ տեղադրված փոքրածավալ, ոչ խորը զարդաքանդակներով կանաչավուն ֆելզիտե խաչքարը 16-17 դդ.:

ԱՄՐՈՑ ք.ա 2-1 հազ. Գերեզմանոց խաչքարերով 13-17 դդ. : Պատմական գերեզմանոցը / 13-17 դդ. / գտնվում է գյուղի հյս – արլ. հատվածում: Պահպանվել են 12-13 դդ. սակավաթիվ խաչքարեր, մեծաքանակ բազալտե սալատապաններ և կոպտատաշ սեղանաձև շիրմաքարեր / 19- 20 դդ. /: Ամրոցը հավանաբար հանդիսացել է Սևանի ավազանի ծայր հյուսիսային ամրությունը:

Եկեղեցի <<ՔԱՆԴՎԱԾ – ԺԱՄ>> 16- 17 դդ. :Գտնվում է գյուղի մեջ, Կոլե Գրիգորյանի հողամասում: Հայտնաբերվել է վերջին տարիներին: Հիմնապատերի որոշ հատվածներ պահպանվել են 1,5 մ բարձրությամբ: Կառուցված է տեղական ձեղքված բազալտից՝ կավահողի շաղախով: Խորանում տեղադրված են բազալտե խաչքարեր և տապանաքարեր:

Դպրոցական, նախադպրոցական, արտադպրոցական, այլ ուսումնական կրթական հաստատություններ

Ծովագյուղ համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց, 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն:

Հ/Հ	Կրթական հաստատության անվանումը	Սահմանված տեղերը	Քանի հոգի է հաճախում
1	Մուրացանի անվան միջն. դպրոց	964	494
2	<<Ծովագյուղի մանկապարտեղ>> ՀՈԱԿ	160	105

Առողջապահական հաստատություններ

«Ծովագյուղի ԱԱՊԿ» ՓԲԸ (ներառում է մանկական և մեծահասակների պոլիկլինիկա

Հ/Հ	Հաստատության անվանումը	Գործունեությունը	Բուժանձնակազմ
1	«Ծովագյուղի ԱԱՊԿ կենտրոն » ՓԲԸ	Ամբուլատոր սպասարկում	Թերապևտ – 1 Ընտանեկան բժիշկ – 1 Բուժքույր - 9

1.6 Բնակչության

Բնակչության թվաքանակը - 4412

4082 /առկա/, որից`

Տնտային տնտեսությունների թիվը - 1070

Աշակերտների թիվ – 494

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաներ - 105

Արցախյան հերոսամարտի մասնակիցներ - 35

Արցախյան հերոսամարտում զոհվածներ - 7

2016թ. ապրիլյան քառօրյայի մասնակիցներ - 24

Համայնքում զբաղված բնակչության թվաքանակը - 2046, որից` 145-ը` զբանջված վարձու աշխատող, 12-ը` անհատ ձեռնարկատեր:

30.12.2016թ. դրությամբ - Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների թվաքանակը` 180 նպաստառու ընտանիքներ:

Կենսաթոշակառուների թվաքանակը` 278

Հաշմանդամ անձանց թվաքանակը` 192

Տեղական ինքնակառավարման մարմինները

Համայնքը ղեկավարում է համայնքի ղեկավարը, որը ընտրվում է հինգ տարին մեկ անգամ: Համայնքի ղեկավարը իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի միջոցով, որի կառուցվածքը հետևյալն է՝

Խ/Խ	ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ
1	Համայնքի ղեկավար	1
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1
3	Համայնքի ղեկավարի օգնական	1
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

5	Աշխ. Քարտուղար /1.2-1/	1
6	Գլխ. Մասնագետ /2.3-1/	1
7	Գլխ. Մասնագետ /2.3-2/	1
8	Գլխ. Մասնագետ /2.3-3/	1

9	Գլխ. Մասնագետ /2.3-4/	1
10	Առաջատար մասնագետ /3.1-1/	1
11	Առաջատար մասնագետ /3.1-2/	1
12	Առաջին կարգի մասնագետ	1

ՏԵԽ. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

13	Ջրագծի սպասարկման բանվոր	1
14	Հավաքարար	1
15	Պահակ	1
16	Վարորդ	1
17	Վարորդ	1
	Ընդամենը	17

Համայնքի հողերի բաշխվածությունն ըստ տեսակների, հա.

	Համայնքի հողերի բաշխվածությունն ըստ տեսակների, հա.	Համայնքում առկա	պետական
--	--	-----------------	---------

1.	Համայնքի վարչական տարածքը, այդ թվում՝	7314,92	2934,13
2.	գյուղատնտեսական նշանակության հողեր	4093,02	45,71
3.	պահուստային հողեր	-	-
4.	բնակավայրի հողեր	219,18	1,33
5.	արդյունաբերական, ընդերքօգտագործման, և այլ հողեր	13,61	-
7.	Էներգետիկա, կապ, տրանսպորտ	89,40	87,35
8.	առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր	2318,09	2227,50
9.	անտառային հողեր	557,34	557,34
10.	ջրային ֆոնդի հողեր	24,28	14,90
11.	հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ	-	-

-

Տեղեկատվություն համայնքի բազմաբնակարան շենքերի վերաբերյալ

		քանակը, հատ	ընդհանուր բնակելի մակերեսը, մ2
1	Ընդամենը բնակարաններ	106	3911
2	1 սենյականոց բնակարաններ	22	495
3	2 սենյականոց բնակարաններ	34	1156
4	3 սենյականոց բնակարաններ	35	1435
5	4 և ավելի սենյականոց բնակարաններ	15	825

Համայնքի բազմաբնակարան շենքերի բաշխվածությունն ըստ կառուցման ժամանակահատվածի.

		շենքերի քանակը, հատ	դրանցում բնակարանների քանակը, հատ	ընդհանուր բնակելի մակերեսը, մ2
1	մինչև 10 տարի առաջ կառուցված	0		
2	11-20 տարի առաջ կառուցված	0		
3	21-50 տարի առաջ կառուցված	7	5884	31510
4	50 և ավելի տարի առաջ կառուցված	0		

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ Կառավարության 14.03.1997 թ. թիվ 51 որոշմամբ, հետևյալ կազմով՝

Գյուղապետարանի շենք	1 միավոր
Մսուր մանկապարտեզ	1 միավոր
Կուլտուրայի պալատ	1 միավոր
Բաղնիքի շենք	1 միավոր
Գրադարան	1 միավոր
Հուշարձան	2 միավոր
Գերեզմանատուն	2 միավոր

Ներդրումային ծրագիր

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքում հնդկացորենի արտադրության և հնդկաձավարի իրացման համակողմանի ավելացման

Ամփոփ նկարագիրը

Եվրամիության <<Էնպարդ>> ծրագրի ներդրման շնորհիվ 2016թ-ին Ծովագյուղ համայնքում կազմավորվեց <<Ծովագյուղի հնդկացորեն>> կոոպերատիվը, կատարվեց 105հա հնդկացորենի ցանք, կառուցվեց հնդկացորենի վերամշակման գործարան: Այժմ գործարանում վերամշակվում է հնդկացորենը և մեկ ամս փաթեթավորված արտադրանքը պատրաստ կլինի իրացման:

Ներդրումների նպատակը համայնքում հնդկացորենի ցանքատարածությունների ավելացման շնորհիվ գործող ձեռնարկության արտադրողականության ավելացումն է, ազգաբնակչության ֆինանսական վիճակի բարելավումը, հանրապետությունում լայն պահանջարկ ունեցող հնդկաձավարի վաճառքի խթանումը:

2017թ-ին նախատեսվել է հնդկացորենի ցանքատարածությունը համայնքում ավելացնել 4 անգամ՝ հասցնելով 400հա-ի:

2017թ-ին հնդկացորենի արտադրությունը 100տոննայից կհասցվի 600 տոննայի, իսկ հնդկաձավարի արտադրությունն ու իրացումը՝ 500 տոննայի: Տարեկան շուրջ 100 տոննայով կավելացվի հնդկաձավարի արտադրության և իրացման ծավալը:

- Կոոպերատիվը կազմավորվել և գործում է 2016թ-ից, կոոպերատիվին ընդգրկվել են թվով 105 անդամներ, սեփականաշնորհված 105հա վարելահողերի բազայի վրա: <<Էնպարդ>> ծրագրի ներդրման շնորհիվ համայնքում կառուցվել է ժամում 1 տոննա արտադրողականությամբ հնդկաձավարի վերամշակման գործարան, որը այժմ շահագործվում է:
- Կոոպերատիվի սեփականատերերը <<Ծովագյուղի հնդկացորեն>> կոոպերատիվում ընդգրկված թվով 105 անդամներն են:

Ծրագրի սոցիալ տնտեսական ազդեցությունը

- Այս ծրագրի ներդրման շնորհիվ 2017թ-ից սկսած համայնքում կլինի թվով 20 նոր աշխատատեղ, իսկ հետագա 5 տարիների ընթացքում այդ ցուցանիշը տարեկան կավելանա 8-10-ով:

- Հնդկացորենի արտադրության և հնդկաձավարի իրացման քանակությունների ավելացմանը զուգընթաց մարզի գրեթե 200 վաճառակետերում կավելացվեն թվով 500-600 աշխատող քաղաքացիների եկամուտները, տեղական բարձրորակ արտադրանքից կօգտվեն բոլոր ցանկացողները:
Շնորհիվ սննդային բարձր արժեքի <<Ծովագյուղի հնդկացորենը>> մարզում լայն սպառում կունենա, որից ֆինանսապես կօգտվեն ինչպես համայնքի հողօգտագործողները, կոոպերատիվի անդամները, վերամշակման գործարանի աշխատողները այնպես էլ սպառող կազմակերպություններն ու քաղաքացիները:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից առաջիկա 5 տարիների համար նախատեսվող /շարունակվող/ հանրապետական, մարզային ծրագրերը և միջոցառումները

✓ Համայնքի լուսավորության ցանցի կառուցում

Վերջին տարիներին իրականացվել է գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման ծրագիր, թվով 20 փողոցներ ապահովվել են գիշերային լուսավորությամբ: 2017թ. –ին թվով 5 փողոցների լուսավորությամբ կավարտվի ծրագրով նախատեսված համայնքի ամբողջ տարածքում լուսավորության ցանցի կառուցումը:

✓ Բազմաբնակարան շենքերի տանիքների կապիտալ վերանորոգում

Համայնքի Կայարան թաղամասի թվով 3 բազմաբնակարան շենքի տանիքներ , ընդհանուր՝ 700 քմ մակերեսով, ազբո շիֆերները կփոխարինվեն ցինկապատ թիթեղներով: Ծրագրի իրականացման ժամանակ կբացառվի բազմաբնակարան շենքերի բնակիչների բնակարաններ անձրևաջրերի ներթափանցման ռիսկը, և վերջինիս պատճառով բնակարաններին հասցված վնասը:

✓ Հանրային լոդափի կառուցում

Հանրային լոդափի գլխավոր հատակագիծը մշակվել է ՀՀ Կառավարության 01.10.2015թ. 1122 որոշումով <<Սևան>> ազգային պարկի ռեկրեացիոն գոտու Ծովագյուղ համայնքի վարչական սահմաններում գտնվող տարածքից հատկացված 9 հա հողամսի վրա:

Հանգստի գոտին իր մեջ ներառում է սպորտային հանգույց/ մինիֆուտբոլի կանաչապատ դաշտ, վոլեյբոլի ասվալտապատ դաշտ, վոլեյբոլի ավազե ծածկույթով դաշտ և թենիսի ասվալտապատ կորտ/ հարակից ջրային տարածքով, մակական լողավազան խաղահրապարակով:

✓ Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում

Համայնք բնակիչների ապահով տեղաշարժն ապահովելու համար շատ կարևոր են բարեկարգ ճանապարհները, որոնք կապահովեն նաև ավտոմեքենաների անվտանգ երթևեկությունը: Ծրագրի իրականացումը կապահովվի դպրոցահասակ և նախադպրոցական տարիքի երեխաների ապահով և անվտանգ տեղաշարժը: Խնդրի լուծումը կնպաստի անբարեկարգ ճանապարհների թվի կրճատմանը: Տրանսպորտային փոխադրումներն ավելի անվտանգ, արագ և դյուրին դարձնելու, համար ծրագրի իրականացումը դառնում է խիստ անհրաժեշտ: Ծրագրի իրականացման համար կարևորվում է պետական աջակցությունը, ներքին պաշտոնական դրամաշնորհի տրամադրումը:

✓ Մարզահրապարակների և խաղահրապարակների կառուցում, բարեկարգում և կահավորում

Բակային կյանքի աշխուժացման, ազատ ժամանցի կազմակերպման համար կարևորվում է խաղահրապարակների և մարզահրապարակների գոյությունը: Այդ ուղղությամբ անցած տարիներին կատարվել են ծրագրեր, որոնք բավարար չեն: Խաղահրապարակների և մարզահրապարակների համար արդեն իսկ կան հատկացված տարածքներ, դրանց մի մասը ժամանակին ծառայել է իր նպատակին, հետագայում մատնվել անուշադրության: Առանձնացված 8 տարածքներում կիրականացվեն կանաչ տարածքների, խաղային միջոցների, նստարանների համար համապատասխան տարածքներ, որոնք կուղեկցվեն շինարարական աշխատանքներով: Ակնկալվում է նաև բնակիչների ակտիվ մասնակցությունը: Ծրագրի իրականացմամբ կվերականգնվեն բակային լավագույն ավանդույթները:

✓ Մշակույթի տան հիմնանորոգում

Մշակութային կյանքի կազմակերպման համար նախադրյալների ստեղծում: Այն կդառնա համայնքի մշակութային եզակի օջախներից մեկը:

Մշակույթի տան շենքային պայմանները, մինչ շենքի վթարայնությունն էլ, եղել են ոչ բավարար:

Հիմնանորոգելով շենքը՝ այդ ընթացքում հնարավոր է կատարել նաև համապատասխան չափանիշներին հարմարացնելու աշխատանքներ, որը հնարավորություն կտա ունենալ հարմարավետ և անվտանգ միջավայր:

✓ Հուշարձանների տարածքի կանաչապատում և գերեզմանների տարածքի ցանկապատում

Հուշարձանների տարածքի կանաչապատումը կնպաստի հաճելի միջավայրի ստեղծմանը: Պատմամշակութային նման վայրերի համար շատ կարևոր են ներկայանալի տեսքն ու դրանց պահպանման համար անհրաժեշտ լավագույն պայմանները: Ծրագիրը կնպաստի համայնքում կանաչապատ տարածքների թվի ավելացմանը: Ծրագրի իրականացման համար կնկալվում է նաև բնակիչների ակտիվ մասնակցությունը Գեղեցիկ միջավայրը կնպաստի այդ տարաքներում միջոցառումների թվի ավելացմանը:

Գերեզմանների տարածքի ցանկապատումը կլուծի այդ տարաքի անվտանգությունը և այնտեղ ամփոփված հուշարձանների ամբողջական պահպանումը՝ հնարավոր վտանգներից:

✓ Կոյուղու նոր համակարգի կառուցում

Հիմնախնդիրը համայնքում առկա է վաղուց, որը խոչընդոտում է բնակիչների կենսական խնդիրների լուծմանը: Ծրագրի իրականացման շնորհիվ կբարձրացվի համակարգի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը, կբարելավվի ծառայության որակը, կվերակառուցվի կոյուղացման համակարգը:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը

Համայնքի բյուջեի եկամուտները ու ծախսերը ըստ կառուցվածքի

ԾՈՎԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ըստ եռամսյակների աճողական			
		1-ին եռամ.	1-ին կիսամ.	9-ամիս	Տարեկան
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	27225.0	53150.0	79525.0	109353.3
1	Գույքահարկ Ծովագյուղի վարչական տարածքում շենք շինությունների համար	51.0	94.0	110.0	149.2
2	Հողի հարկ Ծովագյուղի վարչական տարածքում գտնվող հողերի համար	2779.0	4887.4	8104.3	15911.1
3	Գույքհարկ փոխադրամիջոցներից	1411.7	2545.0	2971.8	3024.6
4	Համայնքի տարածքում կառուցվող հիմնական շինությունների շին. թույլտվություն	60.0	90.0	110.0	120.0
5	Համայնքի տարածքում կառուցվող ոչ հիմնական շինությունների շին. թույլտվություն	2.0	4.0	6.0	10.5
6	Համայնքի վարչական տարածքում շենք. շինութ. քանդման թույլտվություն	3.0	3.0	3.0	3.0
7	Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն	35.0	90.0	120.0	140.0

8	Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն	50.0	140.0	160.0	200.0
9	Այլ արտաքին գովազդի թույլտվություն	20.0	35.0	60.0	76.8
10	Ֆինանսական համահարթեցման կարգով տրվող դոտացիա	21588.3	43176.6	64764.9	86353.2
11	Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ-նշանակության հողերի վարձավճարներ	410.0	570.0	1000.0	1132.3
12	Համայնքի վարչական տարածքում պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	800.0	1500.0	2100.0	2217.6
13	Տեղական վճարներ	10.0	10.0	10.0	10.0
14	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներ	5.0	5.0	5.0	5.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՑՈՒՋԵՒ ԵԿԱՍՈՒՏԵՐ	27225.0	53150.0	79525.0	109353.3

	ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ըստ եռամսյակների աճողական			
		1-ին եռամ.	1-ին կիսամ	9-ամիս	Տարեկան
	Ֆոնդային բյուջեի եկամուտներ՝ այդ թվում	3000.0	10000.0	16000.0	21800.0
1.	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացումներ ֆոնդային բյուջե	3000.0	10000.0	16000.0	21800.0
2.	Համայնքի սեփ. հողերի օտարումից	0.0	0.0	0.0	0.0
3.	Համայնքի գույքի օտարումից	0.0	0.0	0.0	0.0

ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

	Ծախսերի անվանումը	Բաժին	Խումբ	Ղաս	ԸՆԴ.	1 եռ.	1 կիս.	9 ամիս	տարի
X	ՎԱՐՉԱՎԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ	x	x	x	109353.3	27225.0	53150.0	79525.0	109353.3
X	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	01	0	0	30850.0	12075.0	17500.0	24375.0	30850.0
x	Գործադիր և օրենսդիր մարմիններ	01	1	0	22850.0	7800.0	12000.0	17650.0	22850.0
x	Գործադիր և օրենսդիր մարմիններ Գ/Պ ապարատի պահպանում	01	1	1	22850.0	7800.0	12000.0	17650.0	22850.0
4111	Աշխատավարձ				15000.0	4750.0	7500.0	11250.0	15000.0
4212	Էներգետիկ ծառայություններ				1000.0	550.0	650.0	750.0	1000.0
4214	Կապի ծառայություններ				200.0	50.0	100.0	150.0	200.0
4215	Ապահովագրական ծախսեր				100.0	100.0	100.0	100.0	100.0
4221	Ներքին գործողումներ				0.0	0.0	0.0	0.0	0.0
4231	Վարչական ծառայություններ				50.0	50.0	50.0	50.0	50.0
4232	Համակարգչային ծառայություններ				100.0	50.0	50.0	100.0	100.0
4234	Տեղեկատվական ծառայություններ				400.0	400.0	400.0	400.0	400.0
4237	Ներկայացուցչական ծախսեր				2000.0	500.0	1000.0	1500.0	2000.0
4241	Մասնագիտական ծառայություններ				150.0	50.0	100.0	150.0	150.0
4252	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում				250.0	50.0	150.0	200.0	250.0
4261	Գրասենյակային պիտույքներ				600.0	250.0	400.0	500.0	600.0
4264	Տրանսպորտային նյութեր,				2000.0	750.0	1000.0	1750.0	2000.0
4267	Կենցաղային և հանրային սննդի նյութեր				1000.0	250.0	500.0	750.0	1000.0
X	Ընդ. բնույթի հանր. ծառայություններ /այլ դասերի չպատկանող/,որից	01	6	0	8000.0	4275.0	5500.0	6725.0	8000.0
X	Ընդ. բնույթի հանր. ծառայություններ /այլ դասերի չպատկանող/	01	6	1	8000.0	4275.0	5500.0	6725.0	8000.0

4211	Բանկային ծառայություններ				0.0	0.0	0.0	0.0	0.0
------	--------------------------	--	--	--	-----	-----	-----	-----	-----

4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ				0.0	0.0	0.0	0.0	0.0
4235	Կառավարչական ծառայություններ				500.0	125.0	250.0	375.0	500.0
4241	Մասնագիտական ծառայություններ				2000.0	1250.0	1500.0	1750.0	2000.0
4267	Կենցաղային և հանրային սննդի նյութեր				1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0
4269	Հատուկ նպատակային նյութեր				4000.0	1750.0	2500.0	3250.0	4000.0
4823	Պարտադիր վճարներ				500.0	150.0	250.0	350.0	500.0
x	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	04	0	0	7102.3	1900.0	3900.0	5900.0	7102.3
x	Գյուղատնտեսություն	04	2	1	0.0	0.0	0.0	0.0	0.0
4657	այլ կապիտալ դրամաշնորհներ				0.0	0.0	0.0	0.0	0.0
x	ճանապարհային տրանսպորտ	04	5	1	7102.3	1900.0	3900.0	5900.0	7102.3
4251	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում				7102.3	1900.0	3900.0	5900.0	7102.3
X	Շրջակա միջավայրի պահպանություն	05	0	0	6000.0	1500.0	3000.0	4500.0	6000.0
X	Աղբահանում	05	1	1	6000.0	1500.0	3000.0	4500.0	6000.0
4213	Աղբահանություն				6000.0	1500.0	3000.0	4500.0	6000.0
4264	Տրանսպորտային նյութեր				0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Բնության պաշտպանություն	05	4	1	0.0	0.0	0.0	0.0	0.0
4239	Կանաչապատում				0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Կոմունալ ծառայություն	06	0	0	5000.0	1200.0	2950.0	4200.0	5000.0
X	Փողոցների լուսավորում	06	4	1	5000.0	1200.0	2950.0	4200.0	5000.0
4212	Էներգետիկ ծառայություններ				3000.0	1000.0	2000.0	2500.0	3000.0
4269	Հատուկ նպատակային նյութեր				2000.0	200.0	950.0	1700.0	2000.0
X	Առողջապահություն	07	0	0	800.0	300.0	300.0	300.0	800.0
X	Առողջապահություն /այլ դասերին չպատկանող/	07	6	2	800.0	300.0	300.0	300.0	800.0
4511	Սուբսիդիա Ծովագյուղի ԱԱՊ կենտրոնի ՓԲԸ - ին				800.0	300.0	300.0	300.0	800.0

X	Հանգիստ.Մշակույթ. Կրոն	08	0	0	0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Հանգստի և սպորտի ծառայություններ	08	1	1	0.0	0.0	0.0	0.0	0.0
4251	Մարզադաշտի ընթացիկ նորոգում և պահպանում				0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Մշակույթի տներ. ակումբներ. կենտրոններ	08	2	3	0.0	0.0	0.0	0.0	0.0
4269	Հատուկ նպատակային նյութեր				0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Մշակութային ծառայություններ	08	2	7	0.0	0.0	0.0	0.0	0.0
4251	Հուշարձանների ընթացիկ վերանորոգում				0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Քաղ. կուս.հաս.կազմակերպություններ, արհմիություններ	08	4	2	0.0	0.0	0.0	0.0	0.0
4819	Անդամավճար ,Համայնքների միություններ Հ/Կ -ին				0.0	0.0	0.0	0.0	0.0
X	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	09	0	0	27500.0	5500.0	11500.0	17500.0	27500.0
X	Նախադպրոցական կրթություն	09	1	1	26000.0	5000.0	11000.0	17000.0	26000.0
4269	Հատուկ նպատակային այլ նյութեր				0.0	0.0	0.0	0.0	0.0
4511	Սուբսիդիա Օովագյուղի մսուր /մանկապարտեզ/ ՀՈԱԿ - ին				26000.0	5000.0	11000.0	17000.0	26000.0
X	ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	9	2	2	1500.0	500.0	500.0	500.0	1500.0
4511	Սուբսիդիա Օովագյուղի միջն. դպրոց ՊՈԱԿ - ին				1500.0	500.0	500.0	500.0	1500.0
X	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱԵՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	10	0	0	10301.0	1750.0	4000.0	6750.0	10301.0
X	Մայրության նպաստներ	10	4	1	5000.0	1000.0	2000.0	3000.0	5000.0
4722	Երեխաների ծննդյան նպաստներ				5000.0	1000.0	2000.0	3000.0	5000.0
X	Սոցիալական հատուկ արտոնություններ	10	7	1	5301.0	750.0	2000.0	3750.0	5301.0
4729	Սոց. այլ նպաստներ բյուջեից				5301.0	750.0	2000.0	3750.0	5301.0
X	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	11	0	0	21800.0	3000.0	10000.0	16000.0	21800.0
x	Համայնքի պահուստային ֆոնդ, որից`	11	1	2	21800.0	3000.0	10000.0	16000.0	21800.0
4891	Համայնքի վարչ.բյուջեի պահուստ.				21800.0	3000.0	10000.0	16000.0	21800.0

	Ֆոնդից հատկացում ֆոնդային մաս								
X	ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ				109353.3	27225.0	53150.0	79525.0	109353.3
X	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ	X	X	X	23151.549	4351.549	11351.549	17351.549	23151.549
X	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	01	0	0	0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Գործադիր և օրենսդիր մարմիններ Գ/Պ ապարատի պահպանում և/թ	01	1	1	0.0	0.0	0.0	0.0	0.0
5134	Կապիտալ վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
5122	Վարչական սարքավորումներ	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
5113	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
X	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ / այլ դասերին չպատկանող/	01	6	1	0.0	0.0	0.0	0.0	0.0
5112	Շենքերի և շինությունների կառուցում	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
5134	Նախագծահետազոտական ծախսեր	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Տնտեսական հարաբերություններ	04	0	0	19101.549	1301.549	7301.549	13301.549	19101.549
X	Ճանապարհային տրանսպորտ	04	5	1	19101.549	1301.549	7301.549	13301.549	19101.549
5113	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	x	x	x	19101.549	1301.549	7301.549	13301.549	19101.549
5134	Նախագծահետազոտական ծախսեր	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Կոմունալ ծառայություն	06	0	0	4050.0	3050.0	4050.0	4050.0	4050.0
X	Փողոցների լուսավորում	06	4	1	4050.0	3050.0	4050.0	4050.0	4050.0
5134	Նախագծահետազոտական ծախսեր	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
5112	Լուսավորության ցանցի կառուցում	x	x	x	4050.0	3050.0	4050.0	4050.0	4050.0
X	ՀԱՆԳԻՍՏ.ՄՇԱԿՈՒՅԹ. և ԿՐՈՆ	08	0	0	0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Հանգստի և սպորտի ծառայություններ	08	1	1	0.0	0.0	0.0	0.0	0.0
5112	Շենքերի և շինությունների կառուցում	X	X	X	0.0	0.0	0.0	0.0	0.0

5134	Նախագծահետազոտական ծախսեր	X	X	X	0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	08	2	3	0.0	0.0	0.0	0.0	0.0
5122	Վարչական սարքավորումների ձեռք բերում	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
5113	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
5134	Նախագծահետազոտական ծախսեր	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Նախադարոցական կրթություն	09	1	1	0.0	0.0	0.0	0.0	0.0
5113	Մանկապարտեզի ջեռուցման համակարգի կապիտալ վերանորոգում	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
5122	Վարչական սարքավորումների ձեռք բերում	x	x	x	0.0	0.0	0.0	0.0	0.0
X	Ընդ. ֆոնդային բյուջեի ծախսեր	X	X	X	23151.549	4351.549	11351.549	17351.549	23151.549

2.5 Ձարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի բնականոն կյանքի ապահովումը և տնտեսության զարգացումը խոչընդոտող մի շարք խնդիրներ ունեն իրենց պատճառահետևանքային կապը, որի պատճառով էլ շատ ծրագրեր և ձեռնարկներ չեն ստանում լուծում կամ կյանքի չեն կոչվում.

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության

- աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը,
3. Համայնքի աղբահանության աշխատանքների կազմակերպում, համայնքի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը,
 4. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստում, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծումը,
 5. Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով,
 6. Համայնքում բնակարանային շինարարության խթանում
 7. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում
 8. Զբոսաշրջության զարգացման խթանում
 9. Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈՒԹՀՄ/ վերլուծություն

<u>Ուժեղ կողմեր</u>	<u>Թույլ կողմեր</u>	<u>Հնարավորություններ</u>	<u>Սպառնալիքներ</u>
